Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10>> ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25.10.2019թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Դ. Շատվերյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ռ. Եղիազարյան
	Ար. Գրիգորյան
	Ֆ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան
Բացակայում էր՝	
Հանձնաժողովի անդամ՝	Ռ. Ադամյան

1. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ <<Հազարաշեն>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել:

գ) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը 21.08.2019թ. նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը որոշել է՝

- <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի հայտը մերժել,

- ծանուցել հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցին՝ <<Զանգված>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- Կոմիտե հարցում ներկայացնել <<Զանգված>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

- հաջորդ նիստը հրավիրել <<Զանգված>> ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Զանգված>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Դ. Շատվերյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ <<Զանգված>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) <<Զանգված>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

03.09.2019թ. նիստի ընթացքում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնց մասին Կարգի 47-րդ կետի համաձայն նույն օրը ծանուցվել է <<Զանգված>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք և որոշվել է հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները վերջինիս կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 05.09.2019թ.:

<<Զանգված>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որպես անհամապատասխանությունների շտկում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն	Արձանագրված անհամապատասխանության ուղղում
ա)	- <<ՔՆ-ՊԸԱՇՁԲ-16/17>> ծածկագրով 12.04.2016 թ. կնքված պետության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար պետական գնման <<Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր>> պայմանագիր, որի արժեքը կազմել է 2 999 000 ՀՀ դրամ: - <<ՓՆՄԱՇՁԲ-10/11-3>> ծածկագրով 20.07.2018 թ. կնքված պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման <<Արմավիրի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ և ՀՀ հոսպիտալների բաժանմունքների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փասաթղթերի կազմման աշխատանքներ>>	Մասնակցի կողմից ***ներկայացվել են*** այլ պայմանագրեր:

	պայմանագիր, որի արժեքը կազմել է 7 600 000 << դրամ: <<ՓՆՄԱՇՁԲ-10/11-3>> ծածկագրով պայմանագրում նշված չէ, թե հրավերով պահանջվող լիցենզիաների (նախկինում կատարված պայմանագրերի մասով) շրջանակներում որ աշխատանքներն է իրականացրել մասնակիցը, ուստի այն գնահատել հնարավոր չէ:	
բ)	Պայմանագրերին կից չի ներկայացվել նաև հրավերով սահմանված պայմանագրի շրջանակներում իրականացված նախագծանախահաշվային փաստաթղթերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթուղթ:	Մասնակցի կողմից ***չեն ներկայացվել*** հրավերով սահմանված պայմանագրի շրջանակներում իրականացված նախագծանախահաշվային փաստաթղթերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր:
գ)	Միևնույն ժամանակ, վերոգրյալ պայմանագրերը չեն բավարարում հրավերի 2.5 կետով սահմանված նմանատիպ համարվող օբյեկտների պահանջներին և չեն հանդիսանում նմանատիպ:	Մասնակցի կողմից ***ներկայացվել են*** այլ պայմանագրեր:
դ)	ա) Հավելված N 5.2-ի աղյուսակով ներկայացվել է աշխատակցի ներգրավված լինելը օբյեկտում, սակայն չի նշել տվյալ օբյեկտում աշխատակցի կոնկրետ իրականացրած գործունեությունը, ուստի հնարավոր չէ գնահատել նշված աշխատակցի համապատասխան աշխատանքային փորձառությունը: բ) Ներկայացվել է էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերի ներդիր ունեցող, սակայն ճարտարագետ-շինարարի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ (հրավերով պահանջվում է ճարտարագետ – էներգետիկ): գ) <<*էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգերի ներդիր ունեցող Ճարտարագետ-էներգետիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող*>> և <<*բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցերի ներդիր ունեցող ճարտարագետ-էլեկտրիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող*>> առանձին պանահջվող մասնագետների փոխարեն ներկայացվել է վերոգրյալ ներդիրներն ունեցող մեկ անձ՝ ճարտարագետ-էլեկտրիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ:	Մասնակցի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

<<Հանգված>> ՍՊԸ-ի կողմից լրացուցիչ ներկայացվել են նաև նախկինում կատարված այլ պայմանագրեր, մասնավորապես՝

- ՀՀ ՊՆ-ի հետ 18.05.2016թ. կնքված N ՍԲԱՇՁԲ-10/5-1 պայմանագիրը՝ 23 150.0 հազ. դրամի չափով.

- ՀՀ ոստիկանության հետ 13.12.2017թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՇՁԲ-2017-ՆԱԽ14 պայմանագիրը՝ 7 400.0 հազ. դրամի չափով: Այս պայմանագրի հետ կցված չեն հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Լրացուցիչ ներկայացված երկու նոր պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ չեն ներկայացվել հրավերով սահմանված պայմանագրերի շրջանակներում իրականացված նախագծանախահաշվային փաստաթղթերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթղթերը: Լրացուցիչ ներկայացված երկու նոր պայմանագրերը չեն բավարարում հրավերի 2.5 կետով սահմանված նմանատիպ համարվող օբյեկտների պահանջներին և չեն հանդիսանում նմանատիպ:

Այսպիսով գնահատող հանձնաժողովը որոշել է, որ ներկայացված պայմանագրերի շրջանակներում <<Զանգված>> ՍՊԸ-ն չի համապատասխանում Կարգի 61-րդ կետով սահմանվող <<մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշին:

գ) Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը 05.09.2019թ. նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը որոշել է՝

- <<Զանգված>> ՍՊԸ-ի հայտը մերժել,

- ծանուցել հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցին՝ <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- Կոմիտե հարցում ներկայացնել <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- հաջորդ նիստը հրավիրել <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Դ. Շատվերյան)

3.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել:

գ) Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը 12.09.2019թ. նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը որոշել է՝

- <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի հայտը մերժել,

- ծանուցել հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցին՝ <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- Կոմիտե հարցում ներկայացնել <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- հաջորդ նիստը հրավիրել <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 >> ծածկագրով գնման գործընթացը կասեցնելու և հանձնաժողովի նիստը տեղափոխելու մասին

(Դ. Շատվերյան)

4.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 17.09.2019թ. ներկայացված գրությունը (<<Զանգված>> ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ) և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետով՝ գնահատող հանձնաժողովը 18.09.2019թ. հրավիրված նիստին որոշել է կասեցնել ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման գործընթացը, չեղյալ համարել 12.09.2019թ. նիստի արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և հաջորդ նիստը հրավիրել բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հիման վրա <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Դ. Շատվերյան)

5.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.10.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/67 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) դադարեցնել 05.09.2019թ. նիստին <<Զանգված>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը,

2) <<Զանգված>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված 18.05.2016թ. կնքված N ՍԸԱՇՁԲ-10/5-1 պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող,

3) չեղարկել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացված որոշումները:

5.2 Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Զանգված>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

6. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Դ. Շատվերյան)

6.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 5.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 5.2 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Դ. Շատվերյան)

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Դ. Շատվերյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Ար. Գրիգորյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան